

բաժուէր: Այս բանը հարկաւոր է կրկնել տա-
րուայ մէջ մի քանի անգամ:

(Շարունակելի)

Գ. Գ.



ՀԵՐԵՐՏ ՍՊԵՆՍԵՐԻ ԿԱՐԹԻՔԸ ԺՈՂՈՎՐԴԱ-
ԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.

Իսկական օրէնսդիրը չպիտի խուսա-
փէ հոգեբանական ճշմարտութիւնից: Զպէտք
է կասկածել հետեւի ճշմարտութեան, որը
յաճախ անտես է առնուում: Մարդկային կար-
ծիքը կախուած է անմիջական կերպով
չփայտ-լէ-նէից և ոչ իմաց-լէ-նէից: Խմացու-
թիւնը ըստ ինքեան գործողութիւն չի յա-
ռաջացնում: Երբ ես յանկարծ գնդասեղով
ծակում եմ ձեռքս, կամ մատս եռացած
ջրի մէջ թաթիւում, ակամայ ցնցուում եմ:
Խիստ զգայութիւնից յառաջանում է անմի-
ջական շարժում, այն էլ ակամայ: Գորան հա-
կառակ միայն այն զիտակցութիւնը, թէ զըն-
դասեղը ծակում է, թէ եռացած ջուրը այ-
րում է—չի յառաջացնում իմ մէջ ոչ մի
շարժում: Անկասկած եթէ այդ զիտակցու-
թեան հետ միանում է և գնդասեղից կամ
եռացած ջրից յառաջացող վտանգը, այն ժա-
մանակ քիչ թէ շատ խուսափելու վճռական
զգացութիւն է յառաջանում: այդ բանին
զրդում է ինչ երեակայած ցաւը: Միայն
զիտակցելը, թէ խայթոցից կամ այրուելուց
ցաւ է յառաջանում—գործողութիւն չի
յառաջ բերում: գործողութիւնը սկսուում է
հէնց այն բոպէից, երբ բերանացի հաստա-
տուած կամ վերացականօրէն զիտակցած ցա-
ւը դառնում է իրական զիտակցութիւն կամ
սպառնացող ցաւ, երբ զիտակցութեան մէջ
յառաջանում է ցաւի կենդանի պատկերա-
ցումը, իրեւ առաջուց կրած ցաւի մի անորոշ
պատկեր: Այսպէս ուրեմն գործողութեան
պատճառը այդ զէպրումն ինչպէս և այլ զէպ-
քերումն լինում է, ոչ թէ իմացութիւնը, այլ

զգայութիւնը: Այն ինչ որ պարզ գործողու-
թեան մէջ տեսանք, նոյնը նաև ամենաբարդ
գործողութեանց մէջ ենք նկատում: Խմացու-
թիւնն ինքը անկախ կերպով գործողութեան
շարժիչ է, այլ միայն, երբ միացած է նո-
րան զրգռող զգայութիւնը: Գինեմոյը լաւ
գիտէ, որ այսօրուան ցոփութիւնից յետոյ
վաղը առաւօտեան գլխի ցաւ, յոգնածութիւն
պիտի զգայ, բայց այդ ճշմարտութեան գի-
տակցութիւնը նորան չի սարսափեցնում: մին-
չև որ չի ծագում նորա մէջ իրան սպառնա-
ցող ձանձրոյթի կենդանի պատկերը, քանի
զեռ զգայութիւնը, որը հակադրուում է
արեցութեանը, չի հասնիլ այնպիսի ոյժի,
որ կարողանայ հաւասարակշռել այդ ցոփու-
թեանը: Միեւնոյնը կարելի է ասել նաև ամեն
մի անհոգութեան համար: Երբ սպառնացող
շարիքը երեակայութեան առաջ լաւ պատկերա-
նում է և սպառնացող չարչարանքը բոլորովին
զգալի է, այն ժամանակ մարդս տանձահարում
է ներկայ ցանկութեանն անյատաղ բաւակա-
նութիւն տալու ձգտումը: Բայց երբ չկայ
սպառնացող չարչարանքի համար կատարեալ
զիտակցութիւն—ներկայ ցանկութիւնը չի
հանդիպիլ բաւականացուցիչ հականերգործու-
թեան: Գիտակցում ենք ամբողջովին այն ձըշ-
մարտութիւնը, թէ անհոգութիւնը խեղճ
թշուառ դրու թիւն է ստեղծում: Բայց այդ
զիտակցութիւնը մնում է առանց հետեանքի,
մինչև որ թշուառութիւնը չի ներկայանում
կենդանի պատկերով մեր երեակայութեան մէջ:
Մովի ասին կանգնած են մի խումբ մարդիկ,
նաւակը շուռ եկաւ և մարդը խեղդուում է,
բոլորը պարզ տեսնում են, ինչպէս 2+2-ը
կդառնայ 4, որ նա կխեղդուի, եթէ չօգնեն:
Բոլորը գիտեն, որ կարելի է նորան ազատել,
եթէ մի լուրորդ ընկնի ջուրը և զէպի նա
լողայ: Ի ծննդենէ բոլորին էլ ասուած է, որ
իւրաքանչիւրի վերայ պարտք կայ զրուած
օգնելու մերձաւորին վտանգի ժամանակ: Բո-
լորը զիտակցում են, որ իրենց վտանգի են-
թարկելը մարդուն մահուանից ազատելու
համար, ասին և փառաւոր գործ է: Շա-
տերը գիտեն և լողալ, բայց ինչու ոչ որ իրեն
ջուրը չի ձգում և բոլորն էլ բաւականանում
են կամ խեղդուողին խորհուրդներ տալով:

կամ միայն գոչելով օգնեցէր: Բայց ահա—
դուրս է գալիս մկրդ վայր է ձգում վեր-
նազգեստը: Ընկնում է ջուրը և լողում է
նորան օգնելու: Այդ մէկը ինչպիսի է տարբեր-
ւում ուրիշներից: Մի՞թէ իմացութեամբ
ամենին. միևնոյն դիտակցութիւնն ունի նա,
ինչ որ ուրիշները. նա էլ ինչպէս և բոլորը,
գիտէ թէ այն մարդու կեանքը վտանգի մէջ
է, գիտէ թէ կարելի է օգնել նորան: Բայց
նորա մէջ այդ գիտակցութեան հետ արթնա-
նում են մի քանի համապատասխան զգա-
ցութիւնք: Բոլորի մէջ էլ յառաջանում է մի
քանի համապատասխան զգացողութիւններ.
Բայց նոցա մէջ իշխող է վախի կամ դորա
նման մի նողկալի զգայութիւն. իսկ սորա
զգայութիւնների առատութիւնը յառաջաց-
նում է կարեկցութիւն, միացած թերևս
այլ աւելի ստոր կարգի զգայութիւնների
հետ: Թէ այս և թէ այն դէպքում գործո-
ղութիւնը յառաջանում է ոչ թէ իմացու-
թեամբ, այլ զգայութեամբ: Ինչով ուրեմն
կարելի է զննողներին գործունեայ դարձնել
դժբախտ դէպքի նկատմամբ. պարզ է, որ ոչ
թէ իմացութեան պարզաբանութեամբ, այլ
նոցա մէջ վսեմ զգացութիւնները զօրեղացնե-
լով:

Ահա ըստ երևոյթի այն հիմնական հո-
ղերանական ճշմարտութիւնը, որի հետ պիտի
համակերպուի մարդկային զիջողականայի իւ-
րաբանչիւր մի խելացի եղանակ: Պարզ չէ, որ
երբ օրէնսդիրը անուշադիր է թողնում այդ
ճշմարտութիւնը և նոյն իսկ հակառակն է
անում—անխուսափելի սխալ է գործում: Իսկ
այժմեան օրէնսդիրութիւնը մեծ մասամբ այդ-
պէս էլ անում է. խուսափելով հասարակաց
կարծիքից՝ նա եռանդուն կերպով ձգտում է
այնպիսի միջոցների զիմել, որոնք հիմնուում
են այն ենթադրութեան վերայ, թէ մարդ-
կանց գործունեութիւնը բղխում է ոչ թէ
զգայութիւնից այլ իմացութիւնից:

Մի՞թէ հենց այդ ենթադրութիւնը հիմք
չէ կազմում այն բոլոր միջոցների, որոնք
կոչւած են թախանձալից կերպով ուսումնա-
բանական դաստիարակութիւն կազմակերպելու
համար: Երկու այդ հարցի վերաբերմամբ
վիճող կուսակցութիւններից թէ մէկի և թէ

միւսի համար հիմնական հասկացողութիւնը
նոյնն է՝ թէ գործողութիւններն ու բարքերը
լաւացնելու միակ միջոցն է բազմաձանօթու-
թիւնը: Բոլորն էլ խափուած են զանազան
սուտ վիճակագրական թուերից և յամառում
են այն բանում, թէ ուղղակի պետական ու
սումնաբանների կրթութիւնից է կախուած
յանցանքների քչութիւնը և հասարակու-
թեան բարոյականութեան լաւութիւնը: Բո-
լորն էլ լրագիրներում գտնում են համեմա-
տութիւն անգրագէտ և գրագէտ յանցաւոր-
ների քանակի վերաբերմամբ տեսնում են,
որ առաջինը աւելի շատ է քանակով վերջի-
նից և այստեղից առանց մտածելու եզրա-
կացնում են, թէ յանցանքների աղբիւրը—
անկրթութիւնն է: Չեն մտածում, որ կարելի
է նոյն վիճակագրութիւնից ընտրել թուեր և
ապացուցանել նրանցով, հենց նոյնպիսի ար-
ժանահաւաստութեամբ, որ յանցանքների թի-
ւը կախուած է օրինակ այն բանից, թէ
մարդիկ օրեկան քանի անգամ են լուացուում
արգելք յաճախ են փոխում սպիտակեղէնը,
նրանց օթեանի օդի մաքրութիւնը ինչպէս
է, ունին առանձին ննջարան և այլն: Հար-
կաւոր է մտնել բանտ և հաշուել, թէ քանի
այնպիսի յանցաւորներ կան, որոնք սովորու-
թիւն են ունեցել առաւօտեան լողանալ,
լուացուել օրեկան այսքան անգամ. իսկոյն
կտեսնենք, որ յանցաւոր լինելը կաշուի դը-
րութեան հետ կապ ունի—նայելով թէ ազ-
տոտ է, թէ մաքուր*, հաշուեցէր նոցա, որոնք
մի զոյգից աւելի շոր ունեն և թուերի հա-
մեմատութիւնը ցոյց կտայ ձեզ, որ շոր փո-
խողները մեղապարտների ամենաքիչ տոկոսն
են կազմում: Քննեցէք, թէ սրտեղ են նորա
ապրում մեծ փողոցներում, թէ ծուռ մուռ
փողոցներում և դուք կտեսնեք, որ քաղաքի
յանցագործութիւնները առանց բացառու-
թեան բոլորն էլ ծագում են անկրթներից և
նկուղիներից: Ճիշտ այդպէս էլ ժուժկայական
ընկերութեան մոլեռանդ անդամը և առող-
ջապահական ամեն տեսակ միջոցների պաշտ-
պանը կգտնէ, որքան կարելի է, զօրեղ ապա-
ցոյցներ իւր տեսութեան համար վիճակագրա-

* Հեղինակը հեղձում է:

կան թուերի մէջ: Այլ չի ընդունում իրեն առաջարկուած ընդունուած տեսութեան դրութիւնը, որ անկրթութիւնը—պատճառ է, իսկ յանցանքը—հետեանք, և կամենում է հաւատարմաւ արդեօք չիա՞ն ուրիշ պատճառներ, որոնցից հաւասար չափով կախուած է յանցանքը—նա պարզ կտեսնէ, որ յանցանքը յիրաւի կախուած է մեր կեանքի ընթացքից՝ միացած բւա մեծի մասին բնածին ցած յատկութեանց հետ: Այն ժամանակ անհրաժեշտ կլինի խոստովանել, որ անկրթութիւնը այն բազմատեսակ և բազմաթիւ հանգամանքներից մէկն է, որոնց հետեանքը սովորաբար լինում է յանցանքը:

Ըստ երևոյթի ինչպէս կարելի է ժխտել տիրող կարծիքի այս քննութիւնը և դորանից հետեոյ եզրակացութիւնը. բայց այժման կարծիքը նոյն իսկ լսել չի ուզում այդ եզրակացութեան մասին և յամառութեամբ մերժում է. մինչև այն աստիճան թափանցել է ընդունուած հատկացողութիւնը ուղեղների մէջ: Այս կարող է փոխել և յոգս ցնդեցնել միայն իրականութիւնը, երբ ցոյց կտայ թէ ինչպիսի հետեանքներ ծագեցին: Երբ ընդունուած կարծիքի ալիքը հասնում է որոշ մեծութեան, չես կարող յետ մղել ոչ մի համոզմանով, ոչ մի ակներև բանով, պէտք է ալիքը աստիճանաբար խը ոյժը կորցնի մարդկանց գործերի ընթացքում միայն այդ ժամանակից սկսած, ոչ առաջ, կիսուելի կարծիքը: Այս ճշմարիտ է: Այլ կերպ անհասկանալի կմտար, թէ ինչպէս դպրոցական դաստիարակութեան բուժիչ ուժի մասին եղած համոզմունքը, որին ենթարկուում են մարդիկ առանց մատնելու հնազանդելով այն ամեն բաներին, ինչ որ ամեն օր քարոզում են տեսական քաղաքագէտների, թէ ինչպէս այդ համոզումը կարող էր զիմա՛նաբ առօրեայ կեանքի փորձնական ակներև փաստերին: Իւրաքանչիւր մայր, իւրաքանչիւր վարժուհի ամեն օր, երբ իրենց խօսքը չի ազդում, շատ վշտանում են, թէ և միշտ պնդում են այն բանը, թէ ինչն է լու և ինչը վատ: Ամեն տեղից լսուում են գանդաւաններ, որ համոզելը բացատրելը, ակներև հետեանքները մասնացոյց անելը—ոչ մի ազ-

դեցութիւն չի անում որոշ բնաւորութեանց վերայ. և եթէ այդ ազդում է ուրիշ բնաւորութեանց վերայ, այն էլ լինում է շնորհիւ ըմբոսնող զգայութեան. իսկ որտեղ որ այդ սկզբից անպատեղ լինելով, սկսում է ազդել, այդտեղ պատճառ է դառնում ոչ այնքան զաղափարների պարզաբանութիւնը, որքան զգայութեան փոփոխութիւնը. Իւրաքանչիւր անտեսից կլսէր, որ բոլոր կարելի եղած նկատողութիւնները չեն ազդում ծառաների վերայ. ինչքան էլ ըզկէս նոքա իրենց հին նոյն իսկ ամենայնաբ սովորութիւնը չեն թողնում: Ծառաներին կարելի է ուզղել ոչ թէ խրատներով, այլ պահանջներով ու տուգանքներով վստեցնելով—այսինքն զգայութիւն յառաջացնելով: Վիտենք ուրիշ մեթոդորդ—կտեսնենք նոյն բանը: Պարզախ սեղանաբեկները, փքուն ընկերութեանց հիմնադիրները, կեղծ ազրանք արդիւնաբերողները, գործաբանատէրերը, որոնք ուրիշի գրոջմներով օգտուում են, վաճառականները՝ կեղծ կշեռքը ձեռքներին, ապրքովի կոյքերը ապահովագրել տուողները, իրար խափող որսորդները, խաղամոլները—մի թէ սքա բոլորն էլ դաստիարակուած մարդիկ չեն: Վերջենք ծայրայեղ դէպքերը. բոլոր յայտնի թուաւորողները—պատկանում են մեծ մասամբ կրթուած դասակարգին:

Հաւատքը դէպի մտաւոր կրթութեան բարոյական ներգործութիւնը, որը ժխտուած է փաստելով, ոչ այլ ինչ է, եթէ ոչ անհիթիթութեան հասցրած կանխակալ ենթադրութիւն: Պարզս սովորել է, որ այս կամ այն թղթի վերայ դրուած նշանը այս կամ այն խօսքն է նշանակում. ինչ կապ կայ այս իմացածի և վստէ պարտականութեան դիտակցութեան մէջ: Թղթի վերայ նշաններով խօսք կամ ձայն նշանակել իմանալը մի թէ ոյժ ունի մարդու մէջ գէպի բարին ու ճշմարիտն ուզուած մի կամք հաստատելու: Մի թէ բազմապատկութեան աղիւսակը, դուժմորում հանում իմանալը գորեղացնում է մարդու մէջ կարեկցութիւնը և մերձաւորին փնտսելուց յետ է կասեցնում: Հճմարուութեան զգացումը մի թէ, զօրեղանում է, զբաղխուութեամբ կամ հէնց, նոյն իսկ ամենամանրամասն

աշխարհագրութիւն խմանալուց: Ապացուցանել, թէ մէկը միւսից է ծագում, այդ միևնոյն չէ, թէ ոտները ամբասնդուում են ձեռքի մատերի վարժութիւնից, թէ ով սովորում է յատկաներէն, նա խմանում է և երկրաչափութիւն: Միթէ պակաս անմիտ բան է հաստատել, թէ մտաւոր ընդունակութեանց դարգացումը ըստ ինքեան պատճառ է մարդուս գէպի բարին ու ճշմարտան ունեցած զգայութեան կազմակերպութեան:

Մեր ժամանակի գլխաւոր սնապաշտութիւններէն է գպրոցների ամենակարողութեան, դասերի ու ընթերցանութեան վերայ ունեցած հաւատքը, գրքին հէնց նոյն իսկ իրր և մտաւոր կրթութեան գէնքի չափազանց մեծ նշանակութիւն են տալիս: Անմիջական, առաջին ձեռքից եկած տեղեկութիւնը յարգելի է քան երկրորդ ձեռքից եկածը. վերջինը պիտի փոխարինէ առաջինին միայն առաջինի անկարելիութեան պատճառով. իսկ մեզ մօտ վերջինը աւելի գերադաս է: Երականութիւնն այս է, որ այն բոլորը, ինչ որ սպուած է, մանում է կրթութեան դասընթացի մէջ. իսկ այն, ինչ որ ձեռք է բերուում կեանքի և բնութեան անմիջական զիտողութիւնից, այն դասընթացի մէջ մանում է գծուարութեամբ:

Կարգալ—նշանակում է ուրիշի աչքերով տեսնել, նշանակում է սովորել ուրիշի ձիրքերի միջոցով փոխանակ սովորելու անմիջապէս իւր կարողութեամբ, բայց ներկայ նախապաշարմունքը այնքան զօրեղ է, որ սովորելու անուղղակի միջոցը վերադասուում է ուղղակի միջոցից և աւելի կրթիչ է համարուում: Մենք ծիծաղում ենք լսելով, որ վայրենիները համարում են նամակը մի կախարչական զրուածք. մեզ գուարձացնում է այն նեղրի մասին եղած պատմութիւնը, որը տանելով պողով լի գամբիւղը նամակի հետ կերաւ պտուղները և նամակը քարի տակ թաքցրեց, որպէս զի այն նորա մասին չգանդատուի: Նաո հեռու չէ այդ անեկոտից—տարգրութեան միջոցով սովորելու մոլորութիւնը, որով բռնուած է ներկայ հասկացող դասը: Արհեստական գէնքի միջոցով ձեռք բերուած գաղափարներին համեմատած ուրիշ

ճանապարհով ձեռք բերած գաղափարների հետ վերագրուում է մի տեսակ գիւթից ոյժ: Այդ մոլորութիւնը ազդում է շատ վնասակար կերպով նոյն իսկ մտաւոր կրթութեան վերայ. բայց աւելի կորստաբեր է բարոյական կրթութեան նկատմամբ, յառաջ բերելով մի ենթադրութիւն, որ իրր թէ բարոյական կրթութիւնն ևս կարելի է ստանալ ընթերցանութեամբ և դասերի կրկնողութեամբ:

Այսպէս, կրկնում եմ, մարդկանց դործողութիւնները յառաջանում են ոչ թէ խնցրութեամբ, այլ զգայութեամբ: Այստեղից այսպիսի եղրակացութիւն կարելի է հանել, որ այս կամ այն դործողութեանը ցոյց տուած յակումը ամբասնդում է միայն փորձով, այսինքն զգայութիւնը յաճախակի դործողութեան փոխուելով: Երբ երկու գաղափար յաճախ կրկնում են մի որոշ կարգով, զգալի վերջոյ այդ կարգով էլ իրար հետ կապուում են: Զգրի մէքենայական շարժումը որոշ կարգով սկսւում շատ գծուար է, բայց վարժուելով հեշտանում է և վերջը նոյն իսկ անգիտակցաբար է կատարուում: Ճիշտ այնպէս էլ մի որոշ վարմունք մարդուս համար բնական բան է դառնում այս կամ այն զգայութիւններից յառաջացած դործողութեանց կրկնողութեան պատճառով: Բարոյական սովորոյթը կազմուում է ոչ թէ խրատի միջոցով, թէկուզ այդ ամեն որ էլ կրկնուէր. նոյն իսկ ոչ էլ օրինակի միջոցով (իթէ օրինակը չի զրգում նմանուելու). այլ միայն համապատասխան յաճախակի զգայութիւններից յառաջացած դործողութեան միջոցով: Ահա մի ակներև հոգեբանական ճշմարտութիւն ճշտուած աւօրեայ կեանքի փորձով:

Հաղիւ թէ մէկը սխի պնդել զիտակցօրէն, թէ մարդուս համար մտաւոր զիտութիւնը աւելի նշանակութիւն ունի, քան բնաւորութեան կրթութիւնը: Եւրաքանչիւր որ իւր կեանքում նկատած կլինի, որ անգըրադէտ, բայց կայտառ, ագնիւ և ջանասեր մշակը անհամեմատ աւելի գին ունի թէ իւր և թէ ուրիշների համար, քան թէ ուսուսի և զիտուէ, բայց անուշադիր, անկարգ, հարբած, բնասնեքի մասին չմտածող մէկը: Բարձր շրջաններին պատկանող խաղամուրը և

փասնողը, ինչպէս էլ որ կրթուած լինի և դարդացած՝ այնուամենայնիւ այն մարդու չափ էլ չկայ, որը արտօնեալ շրջանից չլինելով հանգերձ, խղճմտանքով անուամ է իւր գործը և որդիներին սպաւորում է՝ չթողնելով նոցա աղքատութեան մէջ աղգականների խնամքի տակ: Աւելին ելելէ, գործը քննենք այնպէս, ինչպէս իրականութեան մէջ կայ, այն ժամանակ բոլորը կհամաձայնին, որ հասարակութեան բարօրութեան համար բնաւորութիւնը — անհամեմատ գերազանց է բաղմամանօթութիւնից: Դորա դէմ չեն վիճում, բայց ստանից հետեոյ կորակացութիւնն էլ չեն ընդունում: Նոյն իսկ հարց չեն տալիս թէ ինչպէս բնաւորութեան վերայ արտացոլուում են բոլոր այն արհեստական միջոցները, որոնք ծանօթութիւն շատացնելու համար են գործադրուում: Բոլոր նպատակներից աւելի ինչ որ կարող է օրէնսդիրը աչքի առաջ ունենալ, ամենից առաջինը, ամենից գլխաւորը — ժողովրդի բնաւորութեան կրթութիւնն է և իւրաքանչիւրի անձնական պատասխանատուութեան զխտակցութեան ամրապնդումը:

Նթէ, ընդունենք, որ ազգի ապագան ազգը կազմող անհատների յատկութիւնիցն է կախուած, որ այդ յատկութիւնը անխուսափելի կերպով ենթարկուում է իրեն շրջապատող պայմաններին, որ այդ պայմաններից յառաջացած զգայութիւնները անխուսափելի կերպով ուժեղանում են, իսկ այդ պայմաններից անկախ զգայութիւնները թուլանում, ոչնչանում են, այն ժամանակ կհամոզուենք, որ հասարակութեան բարոյական վերանորոգումը օրէնքների և խրատների կրկնողութեամբ չի կատարուում, և աւելի ևս մըտաւոր կրթութեամբ, այլ հոգու փսիւմ զգայութեանց ամենօրեայ վարժութեամբ ու ստոր զգայութիւնների դէմ կռուելով: Միակ միջոցն է այն, որ մարդիկ հասարակաց կեանքի կարգ ու կանոնին այնպէս հպատակ լինեն, որ իւրաքանչիւր զեղծում չարիք համարուի իսկ օրինապահութիւնը — բարիք իւրաքանչիւր մարդու համար: Այդ, միայն այդ է խղճութեան կրթութիւնը:

Թարգմ. քոռ. Բ. յար. ուս. Ս. ՄԵԼԻՔԻԱՆ.



ՅՈՎ. ՀԱՆՆԵՍ Ը. ԿԱՐԵՅԵՅԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ
ԱԶԳԱՅԻՆՈՒԹԻՒՆ.

Յովհաննէս Ը-ի մասին գրուածները շատ նպատաւոր չեն նրա համար: Այդ գրուածների մէջ մենք Յովհաննէս Կարբեցու միմիայն բացասական կողմերն ենք տեսնում: Պ. Այլէսանզը երիցեան և ժ. Բ. զարի առաջին յիշատակի մասին գրողները մեծ մասամբ լինելով ներսէս Աշտարակեցու կուսակից կամ նրա հիմնած գաղոցի սաներ՝ որպիսի աշխուժութեամբ գովարանում են ներսէսին՝ համարելով նրան հայ ազգի լաւագոյն իղձերի և հայ եկեղեցու պայծառութեան նահատակը: Նոյնպիսի աշխուժութեամբ պարսաւում են Յովհաննէս Կարբեցուն՝ որպէս հակադիր ներսէսի: Բայց մենք թէ ներսէսին շուայած ներբողների և թէ Յովհաննէսին ուղղած պարսաւների մէջ չափազանցութիւն ենք տեսնում: Անշուշտ ներսէսը իւր ունեցած շատ առաւելութիւնների հետ ունէր և պակասութիւններ, նոյնպէս և Յովհաննէսը իւր կարծուած շատ պակասութիւնների հետ ունէր և առաւելութիւններ, որոնք ի հարկէ ժամանակին անխղճնապահ պատմչի անաչառութեամբ երեան կը գան:

Նրանք, որոնք ցայսօր Յովհաննէսին պախարակում են, կարծում են թէ նրա սաղարանքով ներսէսը Թիֆլիզից հեռացաւ Բեսարաբիա, և նոյն սաղարանքով ինքն Յովհաննէսը Թիֆլիզի առաջնորդ դարձաւ ներսէսի տեղ, և շուտով էլ, ներսէսից առաջ, հայրապետական գահը բարձրացաւ:

Մեզ հասած տեղեկութիւններից դատելով՝ զիտենք, որ Յովհաննէսն ու ներսէսը լինելով Դանիէլի կուսակցութեան մարդիկ՝ լաւ յարաբերութեան մէջ են եղել: Յովհաննէսն էլ ներսէսն էլ Ս. Էջմիածնի արժանաւոր և սրտացաւ միաբաններից էին, այն տարբերութեամբ, որ Յովհաննէսը Ս. Էջմիածնի շահը Ս. Էջմիածնի պարիսպներից ներսն էր նկատում, անձուկ շրջանակի մէջ, իսկ ներսէսը ընդհակառակն, նա մինչև անգամ բուն Էջմիածնի հատոյթները իւր հիմնած գաղոցի վերայ էր գործադրում և հաշիւ չէր ուղում: